ՌՈՉԱԿԱՆ

BookMark

MAGDA TAGTACHIAN

ROJAVA

A Novel

BookMark

ՄԱԳԴԱ ԹԱԽՏԱՃՅԱՆ

ՌՈՋԱՎԱՔ

Վեպ

18+

Թարգմանությունն իսպաներենից՝
Գայանե Հայրապետյանի

ԵՐԵՎԱՆ
2023

BookMark

ՀՏԴ 821.134.2(82)-31 Թախտաճյան
ԳՄԴ 84(7Ար)-44
Թ 165

Թախտաճյան Մագդա
Թ 165 ՌՈՋԱՎԱ: Վեպ / Մ. Թախտաճյան; Թարգմանությունն իսպաներենից՝ Գ. Հայրապետյանի.- Եր.: Newmag, 2023.- 336 էջ:

Նանե Բարսեղյանը, որը մեծացել է Խորհրդային Հայաստանում, թողնում է ամեն ինչ և մեկնում սիրիական Քրդստանի Ռոջավա շրջան՝ իրական հորը գտնելու հույսով: Ուղևորության ընթացքում Նանեին ուղեկցում է զարմուհին՝ լրագրող Ալմա Բարսեղյանը: Պատերազմից ու բռնությունից ավերված այդ վայրում գլխավոր հերոսների համար բախտորոշ է դառնում ծառայությունը կանանց ջոկատում, որտեղ խիզախ կանայք պաշտպանում են այն հողը, որը վաղուց խաղաղություն չի տեսել: Ամենածանր փորձությունների միջով անցնող կանանց բանակն ամենակարևոր դասն է տալիս՝ կյանքում ոչինչ չի տրվում առանց պայքարի:

Իսլամական պետության, թուրքական զորախմբերի և սիրիական ծանր իրականության դեմ մղվող պայքարի ֆոնին զարգանում է Նանե Բարսեղյանի պատմությունը: Մագդա Թախտաճյանն այս վեպում միաձուլում է հուզական պատումն ու լրագրողական սրատեսությունը: Եվ ստեղծում է պատերազմից ավերված տարածքում ձեռք բերված ինքնության ու սիրո մասին պատմություն:

ՀՏԴ 821.134.2(82)-31 Թախտաճյան
ԳՄԴ 84(7Ար)-44

Գլխավոր գործընկեր՝
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
araratbank.am

ISBN 978-9939-884-82-0
Մագդա Թախտաճյան «Ռոջավա» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Rojava © Magda Tagtachian, Agosto 2021
Rojava © Penguin Random House Grupo Editorial S.A., 2021
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Թարգմանությունն իրականացվել է Penguin Random House Grupo Editorial ընկերության հետ կնքած պայմանագրով:

18+ ***Զգուշացում ծնողներին.*** *գրքում կան սեռական ակտի նկարագրություններ:*

Բովանդակություն

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

	Վեպը երազ էր	15
Գլուխ I	Բուժել վերքերը	25
Գլուխ II	Իղձերի հայելին	43
Գլուխ III	Ծրագրերը փոխվում են	65
Գլուխ IV	Սիմֆոնիա ավերակներում	89
Գլուխ V	Գոյության պայքար	109
Գլուխ VI	Մարտնչող կանայք	129

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ VII	Նորակոչիկների ակադեմիան	153
Գլուխ VIII	Եփրատի բեռը	173
Գլուխ IX	Մարտիկը	197
Գլուխ X	Միջնորդները, ջիհադիստները, գերիները	219
Գլուխ XI	Դիմալի ազատումը	241
Գլուխ XII	Նահատակների ու գերեզմանների միջև	257
Գլուխ XIII	Վերջապես Փարիզ	281
Գլուխ XIV	Հրաժեշտ	301
Վերջաբան	Կյանքը երազ է	327
	Շնորհակալություն	331

BookMark

Նանեի և Ալմայի ճանապարհը
Թուրքիա
Սիրիայի վերահսկողության տակ անցած տարածքներ
Թուրքիայի վերահսկողության տակ անցած տարածքներ
Տիգրիս
Դերիկ
Կամիշլի
Սերեկանյե
Ջորաբլուս
Քոբանի
Ռոջավա
Աֆրին
Մանբիջ
Ռոջավա
Հասակա
Ալ Բաբ
Հալեպ
Ալ-Ասադ լիճ
Ռաքքա
Իդլիբ
Ջաբուլ լիճ
Եփրատ
Լաթաքիա
Դեյլ էլ-Զոր
Իրաք
Տարտուս
Սիրիա
Հոմս
Ալ-Մայադին
Աբու Քամալ
Բաղդադ
Լիբանան
Դամասկոս
Քրդաբնակ շրջաններ (Ռոջավա)
Քրդերի հսկողության տակ գտնվող տարածքներ
2019-ի 2-րդ կիսամյակի դրությամբ
Իրաք
Հորդանան
Սև ծով
Վրաստան
Ադրբեջան
Թուրքիա
Կիպրոս
Սիրիա
Իրան
Միջերկրական ծով
Իսրայել
Հորդանան
Իրաք
Եգիպտոս
Սաուդյան Արաբիա
Քուվեյթ

Նվիրում եմ ցեղասպանությունից
փրկված փոքրիկներիս՝
Մարիա Ելանգեզյան Բալյանին և
Արմենուհի Դեմիրճյան Թախպաճյանին

BookMark

Նրանց, ում ճնշում են,
Մարտիկներին,
Ուժեղ կանանց,
Ազատամիտ կանանց,
Պատվազրկված կանանց,
Նրանց, ովքեր բանականությանը մարտահրավեր են նետում,
Ովքեր սիրում են,
Առաջ են գնում,
Սովորում են,
Պայքարում,
Դողում,
Բժշկում,
Նրանք, ում համար ընտանիքն ամենաթանկն է,
Նրանց, ովքեր ուժեղ են,
Դիմացկուն են,
Թևեր ունեն,
Հառնում են մոխիրներից,
Հոգնում են,
Համառ են,
Ծաղկում են:

BookMark

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

BookMark

Վեպը երազ էր

Բոստոն, ապրիլի 25, 2020

Երբ աչքերը բացեց, հասկացավ, որ գամված է մահճակալին: Զննեց շրջակայքը: Բժիշկներն ու բուժքույրերը հիվանդների շրջայց էին կատարում: Այնպես էին հագնվել, ասես քիմիական զենքից էին պաշտպանվում: Լրագրողի գլուխը պայթում էր: Կոկորդը քերվում էր, կրծքավանդակը՝ սեղմվում: Փորձեց շարժել կոպերը: Այնքան ծանր էին, որ աչքերը հազիվ էր բացում: Սենյակի վերջը չէր երևում:

Նկատեց Լիսային ու ճանաչեց նրան, թեև նա դիմակով էր: Լիսայի ձեռքերում փոքրիկ թխվածք կար, վրան՝ վառվող մոմ: Ու թեև դիմակը ծածկել էր քիթը, բերանն ու ծնոտը, Ալմա Բարսեղյանն իսկույն կռահեց, որ Լիսան ժպտում էր: Հուզումնալից ժեստ էր: Աչքերը չէին խաբում: Այդուհանդերձ, այս ի՞նչ ծիծաղելի հանդերձանք է: Դիմակահանդե՞ս է: Ալման շփոթված էր: Նրա գլուխը պտտվում էր:

Մտնելու հատուկ թույլտվություն ստանալուց հետո Լիսան կանգ առավ մահճակալից երկու մետր հեռավորության վրա ու փորձեց մոռանալ Լուչիանոյի արած «լավությունը». ընդամենը պատասխանել էր իր զանգին և թերապիայի ու նյարդաբանության բաժանմունքի վարիչի հետ լուծել փողի խնդիրը: Լուչիանոյին խնդրելու միտքը ճնշում էր Լիսա Զոնսին, բայց խնդիրը վերաբերում էր Ալմային, և ընկերուհուն տեսակցելու համար նա մի կողմ դրեց հպարտությունը: Այստեղ գալն էլ շատ ռիսկային էր. կարող